

ՀԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՁԵՌՆԱՐԿ
(ARMENIAN INTERNATIONAL MEDICAL FUND)

Հայ Միջազգային Բժշկական Հիմնադրամի Ճաշկերոյթ-Ձեռնարկը տեղի ունեցաւ Կիրակի, Մայիս 3ին Կլէնտոնի Հիլթըն Պանդոկին մէջ:

Սեղաններուն Օրհնութիւնը Կատարեց Պըրպէնքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպատեան, որ կը ներկայացնէր Առաջնորդ Սրբապան Հայրը: Ուրախ ենք յայտնելու, թէ Հայ Միջազգային Բժշկական Հիմնադրամի ջանքերու շնորհիւ Հայաստանի մէջ ցարդ 29 փոքրիկներ բուժուած են՝ կը լսեն եւ կը խօսին: Հիմնադրամը լծուած է աշխատանքի, որպէսզի ծաւալի իրենց ծրագիրը եւ ուրիշ փոքրիկներ եւս կարենան լսել եւ խօսիլ:

Տէր Խաժակ այս առթիւ կարդաց Առաջնորդ Սրբապան Հօր պատգամը, ուր կ'ըսուէր. «Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն մեր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները կը յղենք Հայ Միջազգային Բժշկական Հիմնադրամի պատուակալ Արեւնապետուհի՝ Դոկտ. Մարինա Կիրակոսեանի, Վարչական Կապմի անդամներուն՝ գլխաւորութեամբ Արեւնապետուհի Սալբի Ագարակեանի, բոլոր աշխատակիցներուն եւ նուիրատուներուն:

Որքան գնահատելի է, որ ազգապարծան այս կապմակերպութիւնը 2003 թուի իր հիմնադրութենէն ի վեր որպէս ոչ-շահութաբեր հաստատութիւն, նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան մէջ օգտակար ծառայութիւն մատուցանելու լսողութեան տկարութիւն ունեցող փոքրիկներուն՝ անոնց պարգեւելով «լսելու նուէր»ը:

Մեր սրտագին կոչն է ճաշկերոյթի ներկայ գտնուող հայորդիներուն, որ ձեր նուիրումը գնահատելով նիւթապէս եւս աջակցին ձեզի, որպէսզի քաջութեամբ եւ հաստատակամութեամբ շարունակէք ձեր աստուածահաճոյ եւ ազգանուէր առաքելութիւնը: Վստահ ենք, բոլորիդ համագործակցութեամբ առաւել եւս պիտի պայծառանայ Հայ Միջազգային Բժշկական Հիմնադրամի ապագան եւ բազմաթիւ փոքրիկներ պիտի կարենան լսել եւ դառնալ պատուաբեր հայորդիներ»: